Fit hub Պայմաններ և դրույթներ

Այս պայմաններն ու դրույթները կարգավորում են «Ֆիթ Հաբ» ՍՊ ընկերության (գրանցված Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցման համար՝ 264.110.1418810) և նրա Օգտատերերի միջև հարաբերությունները:

1. Ընկերության ծառայությունները.

1.1 “Ֆիթ Հաբ” ՍՊԸ (այսուհետ՝ «Ընկերություն») ծառայությունները բաղկացած են Օգտատերերին տարբեր գործընկեր կազմակերպությունների տրամադրած սպորտային, ֆիթնես և հանգստի ծառայություններին մուտքի ապահովումից: Ընկերության ծառայությունները տրամադրվում են բացառապես որպես կորպորատիվ պրոդուկտ, հետևաբար, հասանելի են միայն այն հաճախորդ կազմակերպությունների (այսուհետ՝ «Հաճախորդ») աշխատակիցներին, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին, որոնք ունեն Ընկերության հետ գործող իրավահարաբերություն :

1. 2 Օգտատերերը կարող են օգտվել Ընկերության ծառայություններից բացառապես FITHUB բջջային հավելվածի (այսուհետ՝ «Բջջային հավելված») միջոցով և միայն այնտեղ գործող օգտագործողի հաշվի առկայության դեպքում: Ընկերությունն ապահովում է Օգտատերերի հաշիվների ստեղծումը և ակտիվացումը Բջջային հավելվածում՝ Ընկերության ծառայությունների օգտագործման համար կիրառելի պայմանների և դրույթների համաձայն:

1.3 Ընկերությունը երաշխավորում է առնվազն 40 տարբեր գործընկեր կազմակերպությունների ծառայություններից օգտվելու հասանելիություն: Ընկերությունը չի երաշխավորում մուտք որևէ կոնկրետ մարզասրահի/սպորտային կամ ժամանցային ծառայություններ մատուցող կազմակերպության կամ որևէ կոնկրետ Գործընկեր Կազմակերպության: Սա նշանակում է, որ ծառայությունների և Գործընկեր Կազմակերպությունների ցանկը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել (Գործընկեր Կազմակերպությունները կարող են ավելացվել կամ հանվել), և այս փոփոխությունները Օգատերերին կամ Հաճախորդներին իրավունք չեն տալիս պահանջելու փոխհատուցում, ծառայության դադարեցում, փսասների հատուցում կամ որևէ այլ պահանջ Ընկերության նկատմամբ:

1.4 Ընկերության դերը սահմանափակվում է Օգտատերերին տարբեր մարզական և ժամանցային հաստատությունների հետ կապելով և նրանց ծառայություններից օգտվելու հնարավորությունն ապահովելով: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում գործընկեր կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների որակի կամ այդ ծառայությունների մատուցման գործընթացում առաջացած իրավական խնդիրների համար:

2. Ծառայության տևողությունը և դադարեցումը

2.1 Սույն պայմաններն ուժի մեջ են մտնում այն պահից, երբ Օգտատերը դրանց համաձայնություն է տալիս: Օգտատերն իրավունք ունի հրաժարվել պայմանագրից 14 օրացուցային օրվա ընթացքում՝ առանց պատճառաբանության: Հրաժարման ժամկետը սկսվում է Օգտատիրոջ կողմից պայմանագրին առաջին համաձայնություն տալու պահից

(գոյություն ունեցող պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգումը չի համարվում պայմանագրին առաջին անգամ համաձայնություն տալու հավասարազոր գործողություն և չի կարող դիտարկվել որպես նոր պայմանագրի կնքում)։ Հրաժարման դեպքում ընկերությունը կվերադարձնի ծառայության արժեքը՝ հանած արդեն օգտագործված ծառայությունների արժեքը։ Գումարի վերադարձը կիրականացվի այն նույն եղանակով, որով Օգտատերը կատարել է վճարումը։ Հրաժարման դեպքում, վերադարձման ենթակա գումարի չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

Վերադարձվելիք գումար = Հաշվետու ժամանակաշրջանի համար վճարված ընդհանուր վճար – (կատարված այցելությունների քանակ × յուրաքանչյուր այցի միջին արժեք)

Որտեղ.

- **Ընդհանուր վճարված վճարը հաշվետու ժամանակահատվածի համար** = Օգտատիրոջ կողմից տվյալ հաշվետու ժամանակահատվածում վճարված բաժանորդագրության գումարը։
- **Միջին արժեքը մեկ այցի համար** = (Հաշվետու ժամանակահատվածում վճարված ընդհանուր գումարը ÷ Հաշվետու ժամանակահատվածի օրերի քանակը)։
- **Կատարված այցելությունների քանակը** = Օգտատիրոջ կողմից կատարված այցելությունների քանակը տվյալ հաշվետու ժամանակահատվածում մինչև բաժանորդագրության չեղարկումը։

2.2 Ընկերության ծառայությունները մատուցվում են հետևյալ ստանդարտ փաթեթներով՝ 1 ամիս, 3 ամիս, 6 ամիս, 12 ամիս։ Առանձին դեպքերում Ընկերությունը և Հաճախորդը կարող են պայմանավորվել այլ ժամկետային փաթեթների շուրջ։

2. 3 Եթե ծառայության արժեքը վճարվել է Հաճախորդ կազմակերպության կողմից, ապա հաշվարկային ժամանակահատվածի սկիզբը և ավարտը (հաշվետու ժամանակահատվածը) կհամաձայնեցվեն Հաճախորդի և Ընկերության միջև։

2.4 Եթե ծառայությունը վճարվում է Օգտատիրոջ կողմից, ապա Հաշվետու ժամանակահատվածը սկսվում է վճարման ամսաթվից և շարունակվում է մինչև համապատասխան փաթեթի ավարտը՝ այն ամսաթվով, որը նշված կլինի Բջջային հավելվածում։։

2.5 Օգտատերը կարող է ցանկացած պահի դադարեցնել ծառայությունը՝ հաջորդ հաշվարկային ժամանակահատվածի համար։ Սակայն գործող ժամանակահատվածի համար գումարի վերադարձ չի իրականացվում, և հաշիվը կդասվի որպես «ոչ ակտիվ» դադարեցման ողջ ընթացքում։ Օգտատերը կարող է վերականգնել ծառայությունը ցանկացած ժամանակ՝ վճարելով ծառայության արժեքը և հաշիվը նորից ակտիվացնելով։

2.6 Օգտատերը կարող է ցանկացած պահի դադարեցնել ծառայությունը, ինչի արդյունքում կդադարեցվի նաև նրա անձնական տվյալների մշակումը: Գործող հաշվարկային ժամանակահատվածի համար գումարի վերադարձ չի իրականացվում:

2.7 Եթե Օգտատերը մեկ տարվա ընթացքում չի օգտվում ծառայությունից, հաշիվը ավտոմատ կերպով կջնջվի, և ծառայություններից օգտվելու հասանելիությունը կդադարեցվի:

2.8 Պայմանագրի կնքումից հետո Օգտատերը կարող է շարունակել օգտվել ծառայություններից մինչև դրանցից պաշտոնապես հրաժարվելը կամ մինչև իր հաշիվը ավտոմատ կերպով ջնջվի՝ համաձայն 2.7 կետի:

2.9 Ծառայության դադարեցումից հետո ընկերության ներկայացուցիչը կարող է կապ հաստատել Օգտատիրոջ հետ ողջամիտ ժամկետում՝ հետադարձ կապ ստանալու նպատակով:

2.10 Ընկերությունն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել ծառայությունների մատուցման պայմանները՝ տեղեկացնելով Օգտատիրոջը փոփոխությունների ուժի մեջ մտնելուց 30 օր առաջ: Օգտատիրոջը ծանուցումը կարող է իրականացվել էլ. փոստի, կարճ հաղորդագրության (SMS), սոցիալական մեդիայի կամ Հաճախորդ կազմակերպության միջոցով:

2.11 Գնված փաթեթի կասեցումը կամ փոխանցումը թույլատրելի չէ՝ անկախ նրանից, արդյոք փաթեթը գնվել է անմիջապես Օգտատիրոջ, թե Հաճախորդ կազմակերպության կողմից:

3. Վճարումներ ծառայությունների դիմաց

3.1 Եթե ծառայության համար վճարել է հաճախորդ կազմակերպությունը, վճարային տվյալները, այդ թվում՝ ծառայության դիմաց վճարը, կարգավորվում են ընկերության և հաճախորդ կազմակերպության միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրով:

3.2 Եթե վճարման համար պատասխանատու է Օգտատերը, ապա ծառայության վճարը կհայտնվի բջջային հավելվածում Օգտատիրոջ հաշվում ըստ Օգտատիրոջ կողմից ընտրված ծառայության փաթեթի: Տվյալ դեպքում ծառայության վճարը պետք է վճարվի բանկային քարտով հավելվածի միջոցով, բանկային փոխանցմամբ կամ ընկերության կողմից ընտրված այլ վճարման եղանակով:

3.3 Եթե ծառայության վճարը կատարվում է Օգտատիրոջ կողմից, ապա Օգտատիրոջ հաշիվը կդադարեցվի համապատասխան փաթեթի ժամկետի ավարտին, եթե Օգտատերը չկատարի հաջորդ ժամանակահատվածի վճարը:Վճարման կրկնության դեպքում հաշիվը ավտոմատ կերպով կակտիվացվի:

3.4 1 ամսյա ծառայության փաթեթը կվերականգնվի ավտոմատ կերպով, և Օգտատիրոջ կողմից կցված բանկային քարտից ավտոմատ կերպով կվճարվի յուրաքանչյուր ամիս: Օգտատերը իրավունք ունի չեղարկել 1 ամսյա փաթեթի ավտոմատ վերականգնման ծառայությունը բջջային հավելվածի միջոցով: Ավտոմատ վերականգնման չեղարկումը կարող է իրականացվել ոչ ուշ, քան ընթացիկ փաթեթի ժամկետի ավարտից մեկ օր առաջ:

3.5 Ընկերությունը իրավունք ունի ցանկացած պահի փոփոխել ծառայության վճարը: Օգտատերերը կտեղեկացվեն գների բարձրացման մասին փոփոխությունների ուժի մեջ մտնելուց առնվազն 30 օր առաջ: Սակայն փոփոխությունները չեն ազդի արդեն վճարված հաշվարկային ժամանակահատվածների և արդեն ձեռք բերված փաթեթների վրա: Օգտատիրոջը ծանուցումը կկատարվի էլեկտրոնային փոստի, կարճ հաղորդագրության (SMS), սոցիալական մեդիայի կամ Հաճախորդ կազմակերպության միջոցով:

3. 6 Օգտատիրոջ համար վճարման հեշտության և 3. 4 կետով սահմանված ավտոմատ վճարման ապահովման նպատակով, Ընկերությունը կպահպանի Օգտատիրոջ կողմից փաթեթների ձեռքբերման համար օգտագործված բանկային քարտի տվյալները:

4. Բջջային հավելվածի օգտագործման պայմաններ

4.1 Ընկերության կողմից մատուցվող ծառայությունները հասանելի են միայն բջջային հավելվածի միջոցով՝ օգտագործելով Օգտատիրոջ ակտիվ պրոֆիլը/հաշվի տվյալները:

4.2 Գործընկերների կողմից կառավարվող հաստատություններում ծառայություններից օգտվելիս Օգտատերը պետք է իր հետ ունենա անձնագիր կամ այլ անձը հաստատող փաստաթուղթ:

4.3 Ընկերության աշխատակիցներն ու Գործընկեր կազմակերպություններն իրավունք ունեն ստուգել Օգտատիրոջ ինքնությունը: Եթե հավելվածի օգտագործման պայմանների խախտում հայտնաբերվի, ընկերությունը կարող է արգելափակել Օգտատիրոջ պրոֆիլը/հաշիվը:

4.4 Օգտատերը պետք է պահպանի Գործընկեր կազմակերպության կողմից շահագործվող հաստատության կանոններն ու կանոնակարգերը, ներառյալ աշխատանքային ժամերը և այլ աշխատանքային կանոնները:

4.5 Գործընկեր կազմակերպությունը կարող է պահանջել կանխավճար ծառայությունների ամրագրման համար: Ամրագրման պայմանները ենթակա են Գործընկերների քաղաքականությանը:

4.6 Գործընկեր կազմակերպությունը կարող է գանձել հավելյալ վճարներ այն ծառայությունների համար, որոնք հայտարարված են Ընկերության կողմից կամ հանրային ձևով հրապարակված են:

4.7 Ընկերությունը խորհուրդ է տալիս Օգտատիրոջը անմիջապես կապ հաստատել Գործընկեր կազմակերպության հետ՝ խմբային միջոցառումների համար տեղեր ամրագրելու և սպասարկման որոշակի կանոնների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

4.8 Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվությունը հասանելի է ընկերության կայքում՝ www.fithub.am կամ սպասարկման կենտրոնի միջոցով:

4.9 Օգտատերը չպետք է կիսվի իր պրոֆիլի/հաշվի տվյալներով այլ անձանց հետ կամ թույլ տա որևէ մեկին օգտագործել իր հաշիվը: Օգտատերը պետք է օգտագործի բջջային հավելվածը

միայն այն սարքի վրա, որի վրա գրանցված է: Եթե օգտագործվում է այլ սարք, Օգտատերը պետք է նախապես տեղեկացնի ընկերությանը և խնդրի սարքը փոխել:

4.10 Օգտատիրոջը արգելվում է նշել Գործընկեր հաստատությունում այցը որպես ավարտված նշել, եթե նա չի ստացել համապատասխան ծառայություն (կեղծ այց):

4.11 Օգտատիրոջ կողմից պայմանների խախտման դեպքում Ընկերությունը կարող է միակողմանիորեն դադարեցնել ծառայությունը, հրաժարվել հետագայում ծառայություններ մատուցելուց, պահանջել փոխհատուցում կամ պարտադրել այլ պարտավորություններ: Ընթացիկ հաշվարկային ժամանակահատվածի համար վերադարձներ չեն կատարվում:

4.12 Ընկերությունն իրավունք ունի փոփոխել բջջային հավելվածի օգտագործման պայմանները՝ Օգտատիրոջը տեղեկացնելով փոփոխությունների ուժի մեջ մտնելուց առնվազն 30 օր առաջ: Օգտատիրոջը ծանուցումը կկատարվի էլեկտրոնային փոստի, կարճ հաղորդագրության (SMS), սոցիալական մեդիայի կամ Հաճախորդ կազմակերպության միջոցով:

5. Հաշվի բացում, կառավարում և փակում (պրոֆիլ)

5.1 Գրանցում և հաշվի (պրոֆիլի) կառավարում

5.1.1 Ընկերության ծառայություններից լիարժեք օգտվելու համար Դուք պետք է ստեղծեք հաշիվ (պրոֆիլ): Հաշիվ բացելու համար պետք է հետևեք Ընկերության հրահանգներին՝ տրամադրեք պահանջվող տեղեկությունները և անհրաժեշտության դեպքում անցնեք ստուգում:

ա) Միայն Դուք եք պատասխանատու Ձեր հաշիվը (պրոֆիլը) ստեղծելիս տրամադրված տվյալների ճշգրտության համար:

բ) Գրանցումից և ստուգումից հետո, կկարողանաք օգտագործել կայքը և/կամ հավելվածը հաջողությամբ հաստատումից հետո: Հաստատումը կատարվում է Ձեր գրանցված էլեկտրոնային փոստի հասցեի, հեռախոսահամարի և գաղտնաբառի միջոցով:

գ) Արգելվում է օգտանվան մեջ ներառել որևէ վիրավորական արտահայտություն:

դ) Մեկ օգտատիրոջը/հաճախորդին արգելվում է մեկից ավելի հաշիվ բացել/տիրապետել/կառավարել: Վերոնշյալ կանոնի խախտման դեպքում Ընկերությունն իրավունք ունի անմիջապես արգելափակել կամ ջնջել օգտատիրոջ/հաճախորդի այլընտրանքային հաշիվը:

ե) Դուք պարտավոր եք ապահովել, որ Ձեր անձնական հաշվի (պրոֆիլի) տեղեկատվությունը ճշգրիտ և թարմացված լինի: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում վերը նշված պարտավորության չկատարման հետևանքով առաջացած որևէ վնասի համար: Ընկերությունն իրավունք ունի ցանկացած պահի խնդրել Ձեզանից հաստատել տեղեկատվության ճշգրտությունը կամ տրամադրել փաստաթղթեր կամ այլ ապացույցներ:

զ) Պահպանեք Ձեր անձնական հաշվի (պրոֆիլի) մուտքի կոդը անվտանգ տեղում և երբեք մի՛ բացահայտեք այն երրորդ կողմերին:

է) Դուք պատասխանատվություն եք կրում Ձեր հաշվի միջոցով տեղի ունեցող բոլոր գործողությունների համար: Եթե որևէ անձ մուտք է գործում Ձեր հաշիվ մեկ այլ անձի անունից և նրա ցուցումով, ենթադրվում է, որ նա ունի բավարար լիազորություններ Ձեր անունից գործելու համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Ձեր հաշվին երրորդ կողմի կողմից կամ Ձեր թույլտվությամբ չարտոնված մուտք գործելու հետևանքով պատճառված որևէ վնասի համար:

ը) Դուք պատասխանատու եք Ձեր հաշվի տեղեկատվության անվտանգության համար: Եթե կասկածում եք, որ Ձեր հաշվի տեղեկությունները արտահոսել են երրորդ կողմի, խնդրում ենք անմիջապես փոխել դրանք կամ կապվել մեզ հետ:

5.2 Հաշվի (պրոֆիլի) փակում

5.2.1 Դուք (օգտատերը) իրավունք ունեք ցանկացած պահի պահանջել Ձեր հաշվի (պրոֆիլի) փակումը՝ Ընկերության հարթակում օգտատիրոջ գրանցված էլեկտրոնային փոստի հասցեից Ընկերության էլեկտրոնային փոստի հասցեին գրավոր հարցում ուղարկելով:

5.2.2 Նախքան Ձեր հաշիվը (պրոֆիլը) փակելու հայտ ներկայացնելը, խնդրում ենք համոզվել, որ Ձեր բոլոր պարտավորությունները կատարվել են, և որ Դուք Ընկերության նկատմամբ որևէ ընթացիկ պարտք կամ պարտավորություն չունեք:

5.2.3 Ձեր հարցումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում մենք կբավարարենք Ձեր հարցումը՝ կփակենք Ձեր հաշիվը (պրոֆիլը):

5.3 **Անձնական տվյալների կառավարում փակ հաշվի մեջ**

5.3.1 Ձեր անձնական տվյալները ջնջելու իրավունքը սահմանվում է անձնական տվյալների պաշտպանության մասին գործող օրենսդրությամբ:

5.3.2 Ընկերությունը ջնջում է Ձեր անձնական տվյալները՝ օգտագործելով այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են կոդավորումը և կեղծանունացումը: Ձեր կողմից, Դուք պետք է մաքրեք քեշը, քուքիները և պատմությունը յուրաքանչյուր բրաուզերից, որն օգտագործել եք հարթակներ մուտք գործելու համար: Եթե ներբեռնել եք Ընկերության հավելվածը Ձեր որևէ սարքի վրա, ապա պետք է այն ջնջեք:

5.3.3 Դուք կստանաք համապատասխան ծանուցում Ընկերությունից Ձեր հաշվի (պրոֆիլի) փակման վերաբերյալ:

5.4 Ձեր հաշիվը (պրոֆիլը) փակելու և անձնական տվյալները ջնջելու բացառիկ դեպքեր

Մենք չենք կարող փակել կամ ջնջել Ձեր հաշիվը/տվյալները, եթե՝

ա) Դուք ունեք գործող պարտավորություն/պատասխանատվություն Ընկերության/վաճառողի/ծառայություն մատուցողի/գնորդի նկատմամբ:

բ) Հաշվի հետ կապված տվյալները անհրաժեշտ են խարդախ կամ անօրինական գործողությունները հայտնաբերելու/կանխելու/մեղմացնելու կամ հետաքննելու համար:

գ) Հաշվի հետ կապված տվյալները պահանջվում են համապատասխան օրենքներին և կանոնակարգերին համապատասխանելու համար:

դ) Հաշվի հետ կապված տվյալները անհրաժեշտ են բողոքներին արձագանքելու և դրանք լուծելու ուղիներ գտնելու համար:

ե) Հաշվի հետ կապված տվյալների պահպանման/պահպանման վերաբերյալ առկա է համապատասխան լիազոր մարմնի հրաման/հրահանգ/որոշում:
զ) Եթե մենք որևէ պատճառով չենք կարող ջնջել Ձեր տվյալները, դրանք կպահպանվեն մեր Անձնական տվյալների մշակման քաղաքականության համաձայն:

6. Անչափահաս Օգտատերեր

6.1 Ընկերության Ծառայությունները նախատեսված են հիմնականում 18 և ավելի բարձր տարիքի անձանց համար:

6.2 16–18 տարեկան Օգտատերեր

ա) 16-ից 18 տարեկան անձինք կարող են օգտվել Ծառայություններից միայն ծնողի կամ օրինական ներկայացուցչի նախնական համաձայնությամբ և պատասխանատվությամբ, ով համարվում է կողմ սույն Ընդհանուր Պայմանների շրջանակներում:
բ) Ծառայություններից անչափահասի օգտվելու թույլտվություն տալով՝ ծնողը կամ օրինական ներկայացուցիչը հստակորեն ստանձնում է պատասխանատվություն ինչպես Ծառայությունների օգտագործման, այնպես էլ Բջջային հավելվածի միջոցով հասանելի ցանկացած գործունեության մասնակցության համար:

6.3 Մինչև 16 տարեկան Օգտատերեր

ա) 16 տարեկանից ցածր անձանց արգելվում է ստեղծել կամ ունենալ հաշիվ Բջջային հավելվածում կամ անմիջապես օգտվել Ծառայություններից:
ա) Եթե Գործընկեր Կազմակերպությունը թույլ է տալիս, ապա մինչև 16 տարեկան անձանց մուտքը հաստատություններ կամ մասնակցությունը գործունեություններին կարող է կազմակերպվել միայն ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից, ով լիովին պատասխանատու է այդ օգտագործման համար:

6.4 Գործընկեր Կազմակերպությունների Կանոններ-Վերոնշյալի հետ միասին, յուրաքանչյուր Գործընկեր Կազմակերպություն կարող է սահմանել իր ներքին կանոններն ու սահմանափակումները՝ իր հաստատություններ մուտք գործելու կամ որոշակի գործունեությունների մասնակցելու նվազագույն տարիքային շեմի վերաբերյալ: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում, եթե Գործընկեր Կազմակերպությունը նման հիմքով մերժում է անչափահաս Օգտատիրոջ մուտքը:

6.5 Պատասխանատվությունից հրաժարում -Ծնողը կամ օրինական ներկայացուցիչը ընդունում է, որ սպորտային և ժամանցային հաստատությունների օգտագործումը ներառում է որոշակի ռիսկեր և ամբողջությամբ ստանձնում է պատասխանատվությունը անչափահաս Օգտատիրոջ՝ Ծառայությունների միջոցով ամրագրված կամ հասանելի դարձած գործունեություններին մասնակցության համար: